

## ՎԱԶԱԳԱՆ <ՈՎՀԱՍՆԻՍՅԱՆ

### ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՄԻՆ

Ամե՞ն մարդ այսօր թող շե՞րմ աղոթի,  
Մեղա՛ գա խոնարի՛ ինքն իր սրտի մե՛շ,  
Հոգու հա՛ց թող տա մեկին անոթի  
Եվ նեցո՞ւկ դառնա թշվառներին խեղճ...

Յուրաքանչյո՞ւս թող հոգու խորքում  
Հավատքի խոկում ունենա խորունկ,  
Թող, որ ունենա խղճի՛ նորոգում,  
Եվ մաքուր սրտի՛, կարոտի՛ արցունք...

Մեկնից ամե՞ն մեկն այսօր թող պղա՛  
Արած և չարած իր մեղքը չնչին,  
Թող ապաշխարի՛, անկեղծ շշնչա՛  
Իր և աշխարհի հոգու ականջին...

Բարի լուսի պես, ամե՞ն մարդ այսօր  
Թող շո՞քն իր հոգու ապա՛տ արձակի.  
Բարի լուսի պես, ամե՞ն մարդ այսօր  
Թող արեգակի նման ճառագի՛...

Ու ամենի՛ց շատ թող բարին բացվի  
Իմ թափառական, անտո՞ւն հայորդո՞ւն,  
Ու ամենից շատ թող լուսը բացվի՛  
Ամենադժբախտ աշխարհի մարդո՞ւն...

Սրտա՞նց կուպեի՛ նոր տարվա շեմի՞ն,  
Արար աշխարհի ու մարդկանց սրտո՞ւմ,  
Անգամ թշնամո՞ւ սրտի մեջ մթին,  
Բարի լո՞յս քամել ու բարի երդո՞ւմ...

Հնա՞ր լիներ ինձ՝ հովերի թևով,  
Ծովից-ծո՞վ անցնել՝ աշխարհից-աշխա՞րի,  
Մտնել տնե-տո՞ւն և իմ ձեռքերով  
Բարի՞ն բաշխեի մարդկանց հավասար...

Հարուստ լիներ՝ բաշխեի բո՞ւր-բո՞ւն,  
Խառնեի՛ հոգի՞ն մարդկանց հոգո՞ւ մեջ,  
Արեգակի պես՝ շռա՞յլ, ոսկեհո՞ւն  
Լուսո՞վ լցնեի հոգիները խեղճ...

Բարի լուսի պես, բարի լուսի պես...